Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գ. Գուլյանին

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու Անահիտ Ալեքսանդրյանի 2023 թվականի ապրիլի 28-ից մայիսի 13-ը Շվեյցարիայի Համադաշնություն գործուղման վերաբերյալ**

1. <u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>

Անահիտ Ալեքսանդրյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>

Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև)
2023թ. ապրիլի 28-ից մայիսի 13-ը

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>

Մասնակցություն Բազելի, Ռոտերդամի և Ստոկհոլմի կոնվենցիաների Կողմերի համաժողովների հանդիպումներին:

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>

2023 թվականի մայիսի 1-ից 12-ը Ժնևում տեղի է ունեցել Բազելի կոնվենցիայի Կողմերի համաժողովի 16-րդ հանդիպումը, Ռոտերդամի կոնվենցիայի Կողմերի

համաժողովի 11-րդ հանդիպումը և Ստոկհոլմի կոնվենցիայի Կողմերի համաժողովի 11-րդ հանդիպումը:

Ռոտերդամի կոնվենցիայի Կողմերի համաժողովում քննարկվել են հետևյալ հարցերը.

- Ռոտերդամի կոնվենցիայի Կողմերի համաժողովի ընթացակարգային կանոնները, որոնք ընդունվել են առաջին հանդիպման ժամանակ, բացառությամբ այն հարցի, որ քվեարկությունը թույլատրվի կոնսենսուսի հասնելու բոլոր ջանքերը սպառելուց հետո:

Այնուամենայնիվ, մի շարք ներկայացուցիչներ դեմ էին քվեարկության թույլտվությանը և նախընտրեցին պահպանել կոնսենսուսային որոշումների կայացման պրակտիկան, որը ոմանք անվանեցին Կոնվենցիայի հիմնաքարը, ինչն ապահովում է, որ հարցերը համակողմանիորեն դիտարկվեն և բոլոր տեսակետները հաշվի առնվեն:

- Կոնվենցիայի III հավելվածի քիմիական նյութերի ցանկը

Քիմիական նյութերի վերանայման կոմիտեն իր տասնութերորդ խորհրդակցության ընթացքում քննարկեց ամիտրոլի, կարբարիլի, ածխածնի տետրաքլորիդի, քլորֆենվինֆոսի, մեթիդատիոնի, մեթիլբրոմիդի, մեթիլպարատիոնի, միրեքսի, պարակվատի և թիոդիկարբի նկատմամբ վերջնական կարգավորիչ գործողության մասին ծանուցումները: Կոմիտեն իր տասնիններորդ նիստում կշարունակի կարբարիլի, քլորֆենվինֆոսի, մեթիդատիոնի և թիոդիկարբի վերաբերյալ ծանուցումների քննարկումը և կքննարկի վեց քիմիական նյութերի 16 նոր ծանուցումներ: Եղել են նաև 38 այլ ծանուցումներ 12 քիմիական նյութերի և 4 խիստ վտանգավոր պեստիցիդային խառնուրդների վերաբերյալ, որոնք սպասում են Կոմիտեի կողմից վերանայմանը և մոտ 300 ծանուցումներ, որոնք համապատասխանում են Կոնվենցիայի I հավելվածի տեղեկատվական պահանջներին:

Կոնվենցիայի քարտուղարությունը Կողմերի համաժողովին ներկայացրեց Կոնվենցիայի III հավելվածում տերբուֆոսի, ացետոքլորի, կարբոսուլֆանի, երկքլորիդ-պարակվատի, ֆենթիոնի, քրիզոտիլային ասբեստի ներառման վերաբերյալ որոշումների նախագծերը:

Հաշվի առնելով Կոնվենցիայի III հավելվածում վերոնշյալ նյութերը (բացի տերբուֆոսից) ներառելու վերաբերյալ կոնսենսուսի բացակայությունը, Կողմերի համաժողովը որոշեց հետաձգել այս հարցի հետագա քննարկումը մինչև իր տասներկուերորդ հանդիպումը:

Տերբուֆոսը ներառված է Ռոտերդամի կոնվենցիայի III հավելվածում:

- Կոնվենցիայի արդյունավետության բարձրացում

Ռոտերդամի կոնվենցիայի 7-րդ, 10-րդ, 11-րդ և 22-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու առաջարկ

Քարտուղարության ներկայացուցիչը նշեց, որ Ռոտերդամի կոնվենցիայի 7-րդ, 10-րդ, 11-րդ և 22-րդ հոդվածները փոփոխելու և նոր՝ VIII հավելվածի ավելացման առաջարկ են ներկայացրել Ավստրալիան, Մալին և Շվեյցարիան: Այնուհետև Բուրկինա Ֆասոն, Կոլումբիան, Կոստա Ռիկան, Վրաստանը, Գանան, Նիգերիան, Նորվեգիան, Պերուն,

Մալդիվները, Հարավային Աֆրիկան, Տոգոն և Միացյալ Թագավորությունը դարձան այդ առաջարկի համահեղինակները, մինչդեռ Մալին դուրս եկավ:

Շվեյցարիայի ներկայացուցիչը մյուս համահեղինակների անունից քննարկման ներկայացրեց այդ առաջարկը: Նշելով, որ Ռոտերդամի կոնվենցիայի նպատակն է պաշտպանել մարդու առողջությունը և շրջակա միջավայրը որոշ վտանգավոր քիմիական նյութերի ազդեցությունից, նա ընդգծեց, որ Կոնվենցիան ձգտում է հասնել այդ նպատակին ոչ թե արգելելով կամ աստիճանաբար վերացնելով կամ սահմանափակելով որոշակի նյութերի օգտագործումը, այլ տեղեկատվության փոխանակմանն աջակցելու և Կոնվենցիայի III հավելվածում թվարկված քիմիական նյութերի վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի սահմանման միջոցով: Դրանով Կոնվենցիան ձգտել է աջակցել Կողմերի կողմից հիմնավորված որոշումների կայացմանը և նպաստել այդ քիմիական նյութերի միջազգային առևտրի համար պատասխանատվության բաժանմանը:

Նա նշեց, որ երկար տարիներ Ռոտերդամի կոնվենցիայի Կողմերի համաժողովը չէր կարողացել III հավելվածում ներառել մի քանի քիմիական նյութեր, չնայած Քիմիական նյութերի վերանայման կոմիտեն եզրակացրել էր, որ այդ քիմիական նյութերը համապատասխանում են Կոնվենցիայում սահմանված չափանիշներին և Կողմերի զգալի մեծամասնությունը սատարել են դրանց ներառմանը Կողմերի համաժողովի հաջորդական հանդիպումների ժամանակ: Կողմնակիցներն ասում են, որ սա անարդյունավետ փակուղի է, որը հակասում է Կոնվենցիայի նպատակներին և խաթարում է Կողմերի կարողությունը՝ հավաքելու անհրաժեշտ տեղեկատվությունը ներմուծումը կարգավորելու և հետագայում այդ քիմիական նյութերը կայուն կերպով կառավարելու համար:

Առաջարկը նպատակ ուներ դուրս գալ փակուղուց, բարձրացնել արդյունավետությունը և ապահովել Կոնվենցիայի շարունակական արդիականությունը՝ նոր՝ VIII հավելված ստեղծելու միջոցով, որտեղ քիմիական նյութերը կարող էին ընդգրկվել, եթե Կողմերի համաժողովը չհամաձայնվի դրանք ներառել III հավելվածում: Կողմերի համաժողովը կձգտի նոր հավելվածում քիմիական նյութերը ներառել կոնսենսուսային որոշմամբ: Այնուամենայնիվ, եթե կոնսենսուսի հասնելու բոլոր ջանքերը սպառվեն, որոշումը կարող է ընդունվել ձայների երեք քառորդի մեծամասնությամբ:

Կողմերի համաժողովի ընթացքում քվեարկություն է կազմակերպվել VIII հավելվածի ստեղծման համար: Քվեարկության արդյունքում Կողմերի մեծամասնությունը կողմ էր VIII հավելվածի ստեղծմանը, սակայն ձայների երեք քառորդին հասնել չհաջողվեց և VIII հավելվածի առաջարկը մերժվեց:

Ստոկհոլմի կոնվենցիայի Կողմերի համաժողովում քննարկվել են հետևյալ հարցերը.

- ԴԴՏ

ԴԴՏ-ի մասով փորձագիտական խումբը պատրաստել է զեկույց ԴԴՏ-ի և դրա այլընտրանքների արտադրության և օգտագործման վերաբերյալ՝ օգնելու Կողմերի համաժողովին գնահատելու ԴԴՏ-ի շարունակական անհրաժեշտությունը հիվանդություններ փոխանցողների դեմ պայքարելու համար: Լսվեց ՅՈՒՆԵՊ-ի զեկույցը ԴԴՏ -ի այլընտրանքների մշակման «Ճանապարհային քարտեզի», ինչպես նաև մալարիայի վերաբերյալ ԱՀԿ ուղեցույցների իրականացման վերաբերյալ:

-ՊՔԴ

Համաժողովի քննարկմանը ներկայացվել է ՊՔԴ-ների վերացման ուղղությամբ առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը և ՊՔԴ-ների կադաստրների կազմման և ՊՔԴ-ների անալիզի նորացված ձեռնարկը:

Նշվեց, որ ձեռնարկն ընդհանուր առմամբ համահունչ է Կոնվենցիայի դրույթին և հաստատվեց:

-Պերֆտորօկտանային սուլֆոնաթթու, դրա աղերը և պերֆտորօկտանային սուլֆոնիլֆտորիդ

Երկրների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին Կայուն օրգանական աղտոտիչների վերանայման կոմիտեին և Քարտուղարությանը ՊՖՕՍ-ի, դրա աղերի և ՊՖՕՍՖ-ի նկատմամբ ընդունելի նպատակների և կոնկրետ բացառությունների վերանայման համար և աջակցություն հայտնեցին որոշման նախագծին:

Քարտուղարությունը Կողմերի համաժողովին առաջարկեց գնահատել ՊՖՕՍ-ի, դրա աղերի և պերֆտորօկտանային սուլֆոնիլֆտորիդի (ՊՖՕՍՖ) շարունակական անհրաժեշտությունը՝ ընդունելի նպատակների և բացառությունների համար ԿՕԱ-ների վերանայման հանձնաժողովի կողմից պատրաստված փաստաթղթում և աջակցություն է հայտնել որոշման նախագծին:

Կողմերի համաժողովում որոշ Կողմեր ափսոսանք արտահայտեցին առաջընթացի բացակայության առումով՝ կապված տերև կտրող մրջյունների դեմ պայքարելու համար որպես միջատների խայծ ՊՖՕՍ-ի օգտագործումը դադարացնելու հետ: Ինչ վերաբերում է կոնկրետ բացառություններին, հանդիպման մասնակիցներին կոչ արվեց անցնել ֆտոր չպարունակող այլընտրանքներին՝ նշելով, որ դրանք հասանելի են հրդեհաշիջման փրփուրների համար և արդեն կարող են օգտագործվել շատ դեպքերում, ինչպես նշված է ՊՖՕՍ-ի և պերֆտորօկտանաթթվի վերաբերյալ առկա լավագույն մեթոդների և բնապահպանական լավագույն փորձի ուղեցույցում: Այս ուղեցույցային փաստաթղթերը պետք է օգտագործվեն ՊՖՕՍ-ի ցանկացած շարունակական օգտագործման ժամանակ, հատկապես այն դեպքում, երբ փոխարինումը ֆտոր չպարունակող այլընտրանքով հնարավոր չէ ՊՖՕՍ-ի արտանետումներից խուսափելու համար:

- Չկանխամտածված արտադրությունից արտանետումները նվազեցնելու կամ վերացնելու միջոցառումներ

Ներկայացնելով այս ենթակետը՝ Քարտուղարության ներկայացուցիչը տեղեկատվություն է տրամադրել առկա լավագույն մեթոդների և լավագույն բնապահպանական փորձի վերաբերյալ ուղեցույցների վերաբերյալ:

Քննարկումների ընթացքում մասնակիցները շեշտեցին առկա լավագույն մեթոդների ու լավագույն բնապահպանական փորձի վերաբերյալ գործիքակազմի և ուղեցույցների կարևորությունը Կոնվենցիայի նպատակին հասնելու համար՝ նվազեցնելու կամ վերացնելու կայուն օրգանական աղտոտիչների ոչ միտումնավոր արտանետումները: Նա հորդորեց բոլոր կողմերին ամբողջությամբ օգտագործել դրանք:

Որոշման նախագիծն ընդունվեց:

- Կոնվենցիայի A, B կամ C հավելվածներում ներառված քիմիական նյութերի ցանկը

Քարտուղարությունը ներկայացրել է փաստաթուղթ, որը պարունակում է Կայուն օրգանական աղտոտիչների վերանայման կոմիտեի առաջարկությունը՝ դիքլորան պլյուս-ը և UV-328-ը Կոնվենցիայի A հավելվածում հատուկ բացառություններով և մետօքսիքլորը Կոնվենցիայի A հավելվածում առանց հատուկ բացառությունների ներառելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում ընդհանուր աջակցություն եղավ վերոնշյալ նյութերը A հավելվածում ներառելու առաջարկությանը:

Ազգային հաշվետվության վերաբերյալ կատարողականի գնահատումը ընդգծեց Կողմերի՝ ժամանակին և ամբողջական ձևով հաշվետվությունները ներկայացնելու ջանքերի ակտիվացման կարևորությունը:

- Համապատասխանություն

Կոնվենցիայի պահանջներին համապատասխանելու մեխանիզմը դիտարկվել է 6-րդ և 7-րդ նիստերում և մնացել է անփոփոխ, քանի որ կային չլուծված հարցեր, որոնք վերաբերում էին ընթացակարգերի անվանմանը և շրջանակին, ինչպես նաև զարգացող կամ անցումային տնտեսություն ունեցող երկրների նկատմամբ դրանց կիրառմանը: Պահանջների չկատարումը պայմանավորված է տեխնոլոգիաների կամ տեխնիկական և ֆինանսական աջակցության բացակայությամբ: Քննարկման ընթացքում բոլոր բանախոսները կարևորեցին համապատասխանության մեխանիզմի անհրաժեշտությունը և ընդունվեց համապատասխանության մեխանիզմի ստեղծման պատմական որոշումը:

Բազելի, Ռոտերդամի և Ստոկհոլմի կոնվենցիաների Կողմերի համաժողովում քննարկվել են նաև հետևյալ հարցերը.

- տեխնիկական աջակցություն,
- ֆինանսական ռեսուրսներ և ֆինանսավորման մեխանիզմներ,
- 15-րդ հոդվածի համաձայն տեղեկատվության ներկայացում,
- արդյունավետության գնահատում,
- համապատասխանություն,
- միջազգային համագործակցություն և համակարգում,
- համագործակցություն և համակարգում Սնդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիայի քարտուղարության հետ,
- համագործակցություն և համակարգում այլ կազմակերպությունների հետ,
- բարելավված համագործակցությունն ու համակարգումը Բազելի, Ռոտերդամի և Ստոկհոլմի կոնվենցիաների միջև,
- տեղեկատվության փոխանակման մեխանիզմ,
- գենդերային խնդիրների ինտեգրում,
- սիներգիզմը վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների ապօրինի շրջանառության և դրանց առևտրի կանխարգելման հարցում,
- գիտությունից մինչև գործողություն:

## 7. <u>ԱՐԴՅՈՒՆՔԸ</u>

- Տերբուֆոսը ներառվել է Ռոտերդամի կոնվենցիայի III հավելվածում:

- Հաստատվել է ՊՔԴ-ների կադաստրների կազմման և դրանց անալիզի նորացված ձեռնարկը:
- Դիքլորան պլյուս-ը, UV-328-ը և մետօքսիքլորը ներառվել են Ստոկհոլմի կոնվենցիայի A հավելվածում:
- Հաստատվել է Ստոկհոլմի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության մեխանիզմը:
- Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կողմից ընտրվել եմ Ռոտերդամի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի անդամ:

Իրավախորհրդատու՝ Ա. Ալեքսանդրյան